ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՇԱՀԱՆԵ ՇՈՒՐԻԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ը.00.03. - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայկ Գերասիմի Մնացականյան
Պաշտոնական Ընդդիմախոսներ՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Բորիսի Սալնազարյան Տնտեսագիտության թեկնածու Հայկ Խաչիկի Մանասելյան
Առաջատար Կազմակերպություն՝	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2017թ.-ի հոկտեմբերի 19-ին, ժամը 15:30-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան 0025, Մ. Նալբանդյան փող., 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. սեպտեմբերի 19-ին:

014 մասնագիտական խորհրդի
Գիտական քարտուղար՝
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Ա. Գևորգյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Փոքր և միջին կազմակերպությունների զարգացման միտումներն ու առանձնահատկությունները մշտապես գտնվել են տնտեսագիտական հետազոտությունների օրակարգում: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը էական դերակատարում ունի ցանկացած երկրի տնտեսական համակարգում, քանի որ իր զարգացման ճանապարհին թողնում է նշանակալից սոցիալ-տնտեսական հետագիծ: Կայուն սոցիալ-տնտեսական քաղաքականության ապահովման շրջանակում փոքր և միջին ձեռնարկատիրությունը (ՓՄՁ) նպատակ ունի ապահովելու երկրի զարգացումը: Ելնելով այս հանգամանքից, ՓՄՁ ոլորտը իր առանձնահատկություն-ներով և զարգացման հնարավորություններով մշտապես գտնվել է պետության հոգածության ներքո, նպատակ ունենալով ապահովելու երկրի տնտեսական անվտանգությունը, մարդկային կապիտալի արդյունավետ վերարտադրությունը, սոցիալական ապահովվածությունը, տարածքների համաչափ զարգացումը:

Դրա հետ մեկտեղ, փոքր և միջին կազմակերպությունների զարգացումը ուղեկցվում է բազում հիմնախնդիրներով, որոնք առնչվում են տնտեսության ինչպես մակրո, այնպես էլ միկրոմակարդակին: Այսպես, դեռևս ՀՀ-ում լիարժեքորեն չի ապահովում միկրովարկավորման հասանելությունը ՓՄՁ ոլորտին, կապված վարկավորման բարձր տոկոսադրույքների, գրավադրման խստագույն պահանջների, ինչպես նաև վարկառուի ոչ բավարար վարկունակության հետ: Այս առումով, ՀՀ-ում արդիական է համարվում ֆինանսատնտեսական գործող նորմատիվների բարելավումը փոքր և միջին կազմակերպությունների վարկավորման ոլորտում:

Իրենց զարգացման փուլում են գտնվում փոքր և միջին կազմակերպությունների զարգացմանն ուղղված այլընտրանքային ֆինանսական փոխատվությունները, ինչպիսիք են լիզինգը, խնայողական միությունների վարկերը: Փորձը ցույց է տալիս, որ փոքր և միջին գործարարության սուբյեկտները լիարժեք տեղեկացված չեն ինչպես երկարաժամկետ այլընտրանքային վարկավորման գործընթացին, այնպես էլ դրա տնտեսական առավելու-թյուններին: Հետևապես, ներկայումս հիմնախնդիր է հանդիսանում համեմատական զուգահեռների անցկացումը միկրոֆինանսավորման տարբեր աղբյուրների միջև և որոշելու դրանց տնտեսական արդյունավետությունը:

Բացի այդ, անգամ գործարարների սեփական միջոցներով փոքր և միջին կազմակերպությունների գործունեության ֆինանսավորումը նույնպես որոշ դեպքերում արդյունավետ չի համարվում և տնտեսական հիմնավորվածություն է պահանջում: ՓՄՁ ոլորտին փոխատվություններ տրամադրելիս հիմնախնդիրներ են ձևավորվում նաև վարկային կազմակերպություններում, որոնք առնչվում են ֆինանսական միջոցների տեղաբաշխման ռիսկերին, կապիտալի համարժեքության պահպանման անհրաժեշտ մակարդակին, ֆինանսավորող սուբյեկտների իրացվելիության աստիճանին:

Փոքր և միջին կազմակերպությունների զարգացման կարևորագույն ֆինանսական գործոն է համարվում նաև հավասարակշիռ հարկային քաղաքականության կիրառումը: Չնայած այն հանգամանքի, որ ՓՄՁ ոլորտում ներկայումս որոշակիորեն մեղմացվել է հարկային վարչարարությունը, այնուամենայնիվ, ՀՀ-ում կիրառվող հարկային քաղաքականությունը գործնականում դեռևս չի նպաստում փոքր և միջին կազմակերպությունների արագընթաց զարգացմանը: Այս առումով, արդիական է համարվում փոքր և միջին կազմակերպությունների գործունեության զարգացմանը նպաստող հարկման մոտիվացիոն ուղիների բացահայտումը:

Ներկայումս հիմնախնդիր է հանդիսանում նաև ՀՀ-ում փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսավորման միկրո և մակրոտնտեսական արդյունավետության ներդաշնակ գնահատումը: Եթե, միկրոֆինանսավորման ժամանակ գործնականում առավելապես շեշտադրվում է ՓՄՁ ոլորտին տրամադրված փոխառությունների վերադարձելիության կառավարումը, ապա ՀՀ-ում որոշակիորեն ուշադրության չեն արժանանում փոքր և միջին կազմակերպությունների զարգացմանը ուղղորդվող ֆինանսական ռեսուրսների սոցիալ-տնտեսական հատույցի գնահատումները:

Փոքր և միջին կազմակերպությունների տնտեսական գործունեության ֆինանսավորման հիմնախնդիրները և դրանց բարելավման ուղիները միշտ էլ գտնվել են հետազոտողների ուշադրության կենտրոնում: Չնայած, փոքր և միջին ձեռներեցության ոլորտի ֆինանսավորման մի շարք հիմնահարցեր արդեն իսկ ուսումնասիրության են արժանացել ինչպես հայազգի, այնպես էլ արտասահմանյան հետազոտողների կողմից, սակայն մեր կարծիքով, դրանք չեն կրում ամբողջական և ավարտուն բնույթ և վերաբերում են ոլորտի զարգացման ֆինանսական առանձին ուղղություններին՝ նպատակ չունենալով ներկայացնելու փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսավորման համապարփակ մեխանիզի հիմնախնդիրներին առնչվող լուծումներ:

Մեր կողմից ներկայացվող ատենախոսությունում փորձ է արվել լրացնել այդ բացը, շեշտադրում կատարելով առավելապես ՀՀ փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսական համապարփակ և հնարավորինս առավել ընդգրկուն հիմնախնդիրների լուծմանը, որն էլ նախորոշել է գիտական հետազոտության նպատակը և ատենախոսության առջև դրված խնդիրները:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Ատենախոսության նպատակն է մշակել ՀՀ-ում գործող փոքր և միջին կազմակերպությունների զարգացմանը նպաստող ֆինանսական համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումների համակարգ, որի իրագործումը պայմանավորվել է հետևյալ խնդիրներով.

- ելնելով փոքր և միջին կազմակերպությունների զարգացման սոցիալ-տնտեսական շարժառիթներից, բացահայտել ՓՄՁ ոլորտի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում,
- ներկայացնել փոքր և միջին գործարարության զարգացման համեմատական վերլուծությունը ինչպես տարածաշրջանային, այնպես էլ տնտեսապես զարգացած և զարգացող երկրների կտրվածքով,
- մեկնաբանել փոքր և միջին կազմակերպությունների զարգացմանն աջակցող ֆինանսական համակարգը՝ բացահայտելով ՓՄՁ ոլորտում ֆինանսական աղբյուրների ներգրավման տարբեր աղբյուրների նպատակահարմարությունը,
- ներկայացնել ՓՄՁ ոլորտը փոխառու և սեփական միջոցներով զարգացման ուղղությամբ ՀՀ-ում գործող փոքր և միջին կազմակերպությունների հասանելիության շրջանակը,
- առաջարկել Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին կազմակերպությունների գործունեության հարկման քաղաքականության բարելավման ուղիներ,
- ՓՄՁ ոլորտին տրամադրվող փոխառությունների գործընթացի ազատականացման շրջանակում մշակել ՀՀ վարկային կազմակերպությունների գործունեության ֆինանսատնտեսական նորմատիվների բարելավման ուղիներ,

- առաջարկել փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսավորման արդյունավետության գնահատման և վերահսկողության բարելավման նոր մոտեցումներ:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:

Հետազոտության օբյեկտը ՀՀ փոքր և միջին կազմակերպություններն են :

Իսկ հետազոտության առարկան ՀՀ փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսավորման հիմնախնդիրները:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:

Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել փոքր և միջին կազմակերպությունների տնտեսական գործունեության վերլուծության, ֆինանսական վերահսկողության ու կարգավորման վերաբերյալ հայրենական և արտասահմանյան տեսաբանների աշխատությունները, գիտական հրապարակումները, աշխատանքային փաստաթղթերը, մակրոտնտեսական վերլուծությունները, ՀՀ-ում գործարարության ոլորտին առնչվող օրենսդրությունը և այն կարգավորող կամ դրան առնչվող նորմատիվային ակտերը: Ուսումնասիրվել են նաև փոքր և միջին կազմակերպությունների տնտեսական գործունեության ֆինանսական արդյունքներին վերաբերող հայրենական և միջազգային հետազոտական զեկույցներ, կազմակերպությունների հաշվետվություններ, վիճակագրական տվյալներ և ՓՄՁ ոլորտին առնչվող այլ նյութեր:

Հետազոտության մեջ կիրառվել են աբստրակցիայի և տեսամեթոդաբանական եղանակներ, ինչպես նաև կազմակերպությունների տնտեսական գործունեության վերլուծության, հաշվետվությունների մեկնաբանման ու գնահատման, ֆինանսատնտեսական տեղեկատվության համեմատման, վիճակագրական, գործոնային և փորձագիտական վերլուծության մեթոդներ:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:

Հետազոտության գիտական նորույթը ՀՀ-ում գործող փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսավորման կատարելագործված ուղիների առաջադրումն է: Մասնավորապես, հետազոտության և առաջադրված խնդիրների լուծման ընթացքում ստացվել են մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են.

- փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսական համակարգի վերլուծության հիման վրա բացահայտվել և մշակվել են ՓՄՁ ոլորտի փոխառու միջոցների հասանելիության աստիճանի բարձրացման, սուբսիդավորման և ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխման արդի ուղիներ,
- հիմնավորվել են փոքր և միջին կազմակերպությունների նկատմամբ կիրառվող հարկային հավասարակշիռ քաղաքականության իրականացման մոտեցումներ, միմյանց հակակշեռով հարկային արտոնություններն ու ՓՄՁ ոլորտին տրամադրվող պետական ֆինանսական աջակցությունը, նպատակ ունենալով ապահովելու փոքր և միջին կազմակերպությունների գործարարության ընդլայնման և հարկման օպտիմալ սահմանաչափեր,
- առաջարկվել են ՓՄՁ ոլորտը ֆինանսավորող վարկային կազմակերպությունների կապիտալի համարժեքության կատարելագործման մոտեցումներ, նպատակ ունենալով մեղմելու վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխման սահմանափակումները և պայմաններ ստեղծելու ՀՀ-ում փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսական հնարավորությունների ընդլայնման համար,

- մշակվել է փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսավորման արդյունավետության տեղեկատվական համակարգ, համախմբելով ՓՄՁ ոլորտում ծավալվող գործարարության սոցիալ-տնտեսական հատույցի ցուցանիշները և առաջարկելով դրանց պատճառահետևանքային կապերի միկրո և մակրոտնտեսական գործոնային վերլուծության փոխկապակցման ուղիներ:

Աշխատանքի գործնական նշանակությունը: Ատենախոսությունն իրենից ներկայացնում է փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսական համակարգի գնահատման, վերլուծության բարելավման տեսական ու գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված ՓՄՁ ոլորտում կիրառվող հարկային քաղաքականության, վարկավորկամ գործընթացի, ինչպես նաև ֆինանսական վերահսկողության ու վերլուծության կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ փոքր և միջին կազմակերպություններում՝ նպաստելով ոլորտի զարգացմանն ուղղված փոխառու միջոց-ների հասանելիությանը, միկրովարկավորման բարելավմանը, ինչպես նաև՝ հարկային վարչարարության կարգավորմանը:

Հետազոտության փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության հիմնադրույթների և գիտական արդյունքների շուրջ մի շարք աշխատանքային քննարկումներ են իրականացվել տնտեսագետ-տեսաբանների հետ, ինչպես նաև աշխատանքը քննարկվել է ԵՊՀ-ի տնետսագիտության ֆակուլտետի «Ֆինանսահաշվային» ամբիոնի նիստում, ԳՊՀ-ի տնտեսագիտության ֆակուլտետի <<Տնտեսագիտության>> ամբիոնի նիստում : Ատենախոսության նորույթի դրույթները հավանության են արժանացել Հյուսիսային համալսարանի «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովում (Երևան, 2015):

Ատենախոսության մեջ քննարկված հարցերն ու հիմնադրույթներն իրենց նախնական լուսաբանումն են ստացել հեղինակի վեց հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 150 էջի վրա՝ առանց հավելվածների: Գրականության ցանկը զբաղեցնում է 8, իսկ հավելվածները՝ 17 էջ: Ատենախոսությունը պարունակում է 28 աղյուսակ և 31 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում ներկայացվել են թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակը, խնդիրները, օբյեկտի առարկան, տեղեկատվության աղբյուրները, արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ “**Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսների առանձնահատկությունները և արդի դրսևորումները**” գլխում վերլուծվել են փոքր և միջին գործարարության զարգացման միտումները ՀՀ-ում: ՓՄՁ ոլորտը զարգացման տարբեր դրսևորումներով է հանդես գալիս տնտեսական զարգացվածության տարբեր մակարդակներ ունեցող միջավայրերում: Այս առումով, նպատակահարմար է համարվել փոքր և միջին գործարարության դրսևորման առանձնահատկությունները մեկնաբանել զարգացող և զարգացած երկրների համեմատական վերլուծության հարթությունում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զարգացող տնտեսություն ունեցող երկրներում, ինչպիսին նաև Հայաստանի Հանրապետությունն է, փոքր և միջին կազմակերպությունների առաքելությունը համարժեք դրսևորումներ է ստանում ինչպես երկրի զարգացման տնտեսական, այնպես էլ հասարակության սոցիալական հիմնախնդիրների ոլորտում՝ միտված գործազրկության մեղմմանը, աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի հավասարակշռմանը, ազգաբնակչության սոցիալական լարվածության թուլացմանը, բարեկեցության աճին: ՀՀ տնտեսության կայունացման հարցում ՓՄՁ_ների կարևորությունը թերագնահատել չի կարելի , քանի որ միջինացված ցուցանիշներով կազմել են հետևյալ տվյալները (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. ՓՄՁ_ի ցուցանիշների վերլուծություն 2013-2015թթ-ի ն [1]

հարկ վճարողների 80%	ապահովել են ՀՆԱ-ի 33%	հարկային եկամուտների 24%	ընդհանուր աշխատաշուկայի 86,3%

ՓՄՁ ոլորտի ընդգրկված տնտեսավարող սուբյեկտները, որպես կանոն կորդինացված չեն գործում: Դրանք, իրենց թվաքանակով բազմապատիկ գերազանցում են խոշոր կազմակերպություններին և սփռված են ամբողջ երկրով մեկ: Այս հանգամանքը հանգեցնում է նրան, որ ՓՄՁ-ների զարգացմամբ լուծվում են տեղային հիմնախնդիրներ, կատարվում են բիզնեսի աջակցման միկրոֆինանսավորումներ, որոնք թիրախավորված են փոքրամասշտաբ ծրագրերի իրականացմանը: Եթե հաջողվում է կորդինացնել և համակարգային կառավարման դաշտում ներառել այդ ծրագրերը, ապա ՓՄՁ ոլորտի ազդեցությունը զգալի է դառնում երկրի տնտեսական աճի վրա: Հակառակ դեպքում, ինչպես նշվում է մասնագիտական գրականությունում, փոքր և միջին կազմակերպությունների զարգացումը առավելապես պայմանավորում է կայունություն, և ոչ թե առաջընթաց:[2]

ՓՄՁ զարգացումը ներառում է նաև ֆինանսավորման փոշիացման ռիսկեր: Որպես կանոն, ոլորտի ֆինանսավորման երկու խոշոր աղբուրներ են հանդիսանում հանրային ֆինանսավորումը (մասնագիտացված և պետական հիմնադրամներ, սուբսիդավորում, պետական դրամաշնորհներ) և միկրովարկավորումը (մասնավոր ֆինանսներ): Հետևաբար,

[1] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ՎԶԵԲ գործարարության աջակցման գրասենյակի 2016թ տվյալների հիման վրա

[2] Selcuk Caner, The role of small and medium Size enterprises in economic development, HSE conference, Moscow, 2011, p.45

ոլորտի միկրոֆինանսավորումը կառավարելի դարձնելու համար կարևորվում է ոչ միայն միկրովարկերի հետ վերադարձը փոքր և միջին վարկառուների կողմից, կամ տրամադրված հանրային ֆինանսների նպատակային ու լիարժեք օգտագործումը, այլ միկրոֆինանսավորման սոցիալ-տնտեսական հատույցի գնահատումը, որը ըստ ուսումնասիրությունների՝ գործնականում լիարժեք չի կիրառվում :



Գծապատկեր 1. ՓՄՁ ոլորտի զարգացման տնտեսական ռիսկայնության համընդհանուր գործոնները[3]

Հետևաբար, ՓՄՁ ոլորտի զարգացումը պարունակում է անարդյունավետ ֆինանսավորման ռիսկեր, որոնք երբեմն խոչընդոտում են փոքր և միջին գործարարության զարգացմանը: Այս իրավիճակը բարդանում է նաև նրանով, որ ի տարբերություն խոշոր կազմակերպությունների, բանկերը առավել դժվարությամբ, և անգամ առավել բարձր տոկոսադրույքներով են վարկավորում ՓՄՁ ոլորտը:

Այսպիսով, փոքր և միջին կազմակերպությունների ձևավորման և գործունեության համեմատական մեկնաբանումները ցույց է տալիս գործարարության ոլորտի կազմակերպչական ու կառավարչական մի շարք առանձնահատկություններ, որոնք վճռորոշ դերակատարում են տնտեսության ՓՄՁ հատվածի ֆինանսական զարգացման համար:

Առաջին, ՓՄՁ ոլորտը լուծում է ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական և նույնիսկ քաղաքական խնդիրներ, այդ իսկ պատճառով, իր կարևորությամբ առանձնացվում է որոշակի չափանիշներով և գործունեության արդյունքներով: Այս առումով, տնտեսավարման ոլորտում այն պետք է առանձնակի մեկնաբանվի և որպես ՓՄՁ գործունեության առանցքային ցուցանիշ, նպատակահարմար է կիրառել կազմակերպությունների գործունեությունից ստացվող տարեկան հասույթի ծավալը, իսկ աշխատողների թվաքանակը կամ կազմակերպությունների տնօրինած ակտիվների քանակը կարելի է ընդամենը դիտարկել որպես ոլորտի տարանջատման ածանցյալ ցուցանիշներ:

Երկրորդ, զարգանալով խոշոր գործարարությանը զուգընթաց, ՓՄՁ ոլորտը չմրցակցելով վերջինիս հետ, այնուամենայնիվ տնտեսավարման ոլորտում կատարում է մի շարք լրացուցիչ գործառույթներ, որոնք իրենց լիարժեք լուծումները չեն ստանում խոշոր բիզնեսում: Մասնավորապես, ՓՄՁ ոլորտը կլանում է գործազրկության պոտենցիալ աճը, աջակցում է գործարարության այնպիսի ոլորտներ, որոնք տվյալ ժամանակահատվածում

3 Կազմված է ատենախոսի կողմից:

խոշոր բիզնեսի համար տնտեսապես շահավետ չեն, մոբիլիզացնում է նյութատեխնիկական լոկալացված միկրոռեսուրսները, աշխուժացնում է միրոֆինանսավորման ոլորտը:

Երրորդ, արժևորելով ՓՄՁ ոլորտի դերը տնտեսական համակարգում, այնուամենայնիվ այն դիտարկվում է ոչ թե կտրուկ առաջընթացի խթանման, այլ կայնուն տնտեսավարման աջակցման միջոց, քանի որ փոքր և միջին կազմակերպությունների զարգացումը կրում է կանխարգելիչ և ռիսկային գործոններ, որոնք այնուհանդերձ, հաշվի են առնվում տնտեսական աճի ռազմավարական կառավարման շրջանակում:

Չորրորդ ՓՄՁ ոլորտը ՀՀ-ում առանձնապես չի դրսևորվում գործարարության դիվերսիֆիկացմամբ, քանի որ այստեղ գերակշիռ մաս են կազմում ծառայություններ մատուցող տնտեսավարող միկրոսուբյկտները, որոնք իրենց հերթին նպաստավոր պայմաններ չեն ստեղծում նորամուծական ծրագրերի իրագործման, գործարարության միջազգայնացման ոլորտում ստեղծված արդյունքների արտահանման համար:

Ատենախոսության երկրորդ՝ ***“Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսավորման խնդիրները ՀՀ-ում”*** գլխում քննարկվում են փոխառությունների հասանելիությունը ՀՀ ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման համակարգում: Այս համատեքստում անդրադարձ է կատարվել նաև սեփական միջոցներով փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսավորման հիմնախնդիրներին:

Այսպես, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գերփոքր գործարարության մեկնարկը առավելապես (շուրջ 90%) ֆինանսավորվում է ձեռներեցի հաշվին, իսկ միջին կազմակերպություններում մեկնարկային կապիտալը ձևավորելիս այդ ցուցանիշը նվազում է մինչև 45%: Հատկանշական է, որ միջին կազմակերպությունների մեկնարկային կապիտալի շուրջ 50%-ը ֆինանսավորվում է վարկային միջոցների հաշվին, և ստացվում է այնպես, որ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ծառայությունների մատուցումը ավելի հասանելի է միջին բիզնեսին, քանի որ վերջինս ապահովված է անհրաժեշտ գրավադրումն ապահովող ակտիվներով:



Գծապատկեր 2. ֆինանսավորման արտաքին և ներքին աղբյուրների կառուցվածքը ՀՀ ՓՄՁ ոլորտում[4]

Փոխառությունների հասանելիությունը ՀՀ ՓՄՁ ոլորտում չպետք է փոխկապակցել միայն վարկային գործող բարձր տոկոսադրույքների կամ վարկառուներին տրմադրվող վարկերի դժվարությունների հետ, որը հիմնականում ընդգծվում է մասնագիտական

[4] “ֆինանսական ծառայությունների օգտագործումը և հասանելիությունը ՄՓՄՁ-ների համար Հայաստանի մարզերում” զեկույց, EDRC

գրականությունում: [5] Այս խնդրին պետք է ցուցաբերել համապարփակ մոտեցում, քննարկելով սոցիալ-տնտեսական և կազմակերպչական գործոններ: Փոխառությունների հասանելիությունը հիմնախնդիրների շատ ավելի լայն շրջանակ է ընդգրկում փոքր և միջին գործարարության ոլորտում, որը պետք է ի նկատի ունենալ ՓՄՁ ոլորտի զարգացման ֆինանսավորման ժամանակ:

Այս առումով, նախ և առաջ, փոքր և միջին կազմակերպությունների համար փոխառու միջոցների հասանելիության արգելքները անհրաժեշտ է դասակարգել և խմբավորել ներկազմակերպչական, ինստիտուցիոնալ և բանկային գործունեության կտրվածքով, որոնցից յուրաքանչյուր խմբի գծով պետք է տալ հստակ գնահատականներ՝ գերփոքր, փոքր և միջին կազմակերպություններում ֆինանսավորման հասանելության հեշտության կամ դժվարությունների առումով(Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Փոխառու միջոցներին փոքր և միջին կազմակերպությունների հասանելիության արգելքների դասակարգումը ՀՀ-ում[6]



ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ վարկային կազմակերպություններից ՓՄՁ սուբեկտների աշխարհագրական դիրքը նույնպես ներգործություն է ունենում փոխառու միջոցների հասանելության վրա: Սակայն, որոշիչ դերակատարում ունեն տրամադրվող վարկերի բարձր տոկոսադրույքները(աղյուսակ 2), որոնք խիստ բացասական ազդեցություն են գործում միկրովարկավորման վրա: Դրան է նպաստում նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված վերաֆինանսավորման բարձր տոկոսադրույքը, որը գործողության մեջ մտավ 2015 թ. սկզբից 10,5% դրույքաչափով:

[5] Անդրեասյան Հ.Հ.,<<Լիզինգի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում >>Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա, Երևան, #3(153), մարտ 2013, էջ 37-40

6 Կազմված է ատենախոսի կողմից:

Աղյուսակ 2.ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողից տրամադրված փոխառությունների տոկոսային դրույքաչափերը ՓՄՁ-ին[7]

կազմակերպության անվանումը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Ինեկոբանկ	13-22	10-16
Անելիք բանկ	սկսած 15	սկսած-12
Զարգացման հայկական բանկ	սկսած 14	սկսած 11
Ֆարմկրեդիտ ՈՒՎԿ	10-17	11-16
Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ	-	7-22
Կիլիկիա ՈՒՎԿ	24	20-24

Սակայն, մեր կարծիքով, անգամ վերաֆինանսավորման գործող տոկոսադրույքը չէր կարող առաջացնել ՓՄՁ ոլորտի միկրովարկավորման այսքան բարձր տոկոսային պահանջներ (16-19%), որն այժմ ներկայացնում են ՀՀ-ում գործող վարկային կազմակերպությունները: Փոխառությունների հասանելիությունը ՀՀ-ում գործող փոքր և միջին կազմակերպություններին զգալիորեն կբարելավի, եթե վարկային կազմակերպությունները վերանայեն իրենց կողմից տեղաբաշխվող ֆինանսական ռեսուրսների տոկոսային մարժան, և դրանով իսկ, տրամադրեն ՓՄՁ ոլորտին “էժան փողեր”:

Բացի այդ, ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման հասանելիությունը փոխկապակցվում է ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական գործոնների հետ, որտեղ առանցքային է համարվում գործարարների միջև փոխվստահությունն ու ոլորտում սոցիալական կապիտալի առկայությունը: Սոցիալական կապիտալի բավարար մակարդակը թույլ է տալիս խմբային փոխառությունների ձևավորման և խնայողական միությունների աջակցությամբ ներխմբային վարկային ռեուրսների հասանելիության ամրապնդմանը հատկապես գերփոքր և փոքր գործարարության ոլորտում:

Եվ վերջապես, գերփոքր, փոքր և միջին գործարարության կողմից արտաքին փոխառությունների հասանելիության շրջանակի ընդլայնման լուրջ խոչընդոտ է հանդիսանում նաև տնտեսավարող ներկայիս սուբյեկտներում ֆինանսական գործիքների կիրառման առաջարկների հիմնավոր իրազեկման բացակայությունը: ՓՄՁ ոլորտի սուբյեկտները առայժմ որպես ֆինանսավորման արտաքին աղբյուրներ՝ հիմնականում համարում են միկրովարկերը և գրավատնային վարկերը: Սակայն, ֆինանսական վարձակալության, վարկային միությունների, ֆակտորինգի գործիքակազմի տեղեկացվածությունը զգալիորեն կարող է նպաստել փոքր և միջին կազմակերպությունների կողմից փոխառու միջոցների հասանելիության աստիճանի բարձրացմանը:

Սեփական միջոցներով փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսավորման գծով որոշումներ կայացնելիս, մեր կարծիքով, պետք է հաշվի առնվեն մի շարք հանգմանքներ, ելնելով ոչ միայն գործարարության միջավայրից, այլև ձեռնարկատիրական իրավական ձևից:

Առաջին, ֆինանսավորման սեփական աղբյուրներով ՓՄՁ ոլորտի զարգացումը արդարացվում է հիմնականում այն իրավիճակներում, երբ վարկային բարձր տոկոսադրույքների պարագայում փոքր և միջին կազմակերպությունները բիզնեսի կտրուկ աճ են ապահովում, հակառակ դեպքում՝ գործարարության սահուն աճի պարագայում առավել

[7] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ՎԶԵԲ գործարարության աջակցման գրասենյակի 2016թ տվյալների հիման վրա

նպատակահարմար է դառնում վարկային ռեսուրսների հաշվին տնտեսական գործունեության ընդլայնումը:

Երկրորդ, լիակատար ընկերակցությունների կորպորատիվի անդամները լիովին փոխհատուցում են կրեդիտորներին իրնց կապիտալով, իսկ կոմանդիտները և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում փայատերերը՝ միայն ներդրումների չափով: Հետևաբար, սեփական միջոցներով գործարարության ֆինան-սավորումը լիակատար ընկերակցությունների կորպորատիվի անդամների համար առավել ռիսկային է, որն էլ ՀՀ-ում գործող փոքր և միջին կազմակերպություններին հիմնականում դրդում է հանդես գալ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կարգավիճակով:

Երրորդ, գերփոքր կազմակերպությունները, հիմնականում հանդես գալով որպես անհատ ձեռներեցներ, դուրս են մնում հարկման հիմնական ռեժիմից և գործունեություն են ծավալում առավել բարվոք հարկային դաշտում, վճարելով շրջանառության հարկ 1 % դրույքաչափով, կամ գործելով ընտանեկան բիզնեսի հենքով (ձեռք բերումների փաստաթղթային հիմքերի առկայության պարագայում), ազատվելով շահութահարկից և ավելացված արժեքի հարկից՝ վճարելով միայն եկամտային հարկ: Հետևաբար, ձևավորվող հարկային համեմատաբար ցածր բեռը իր էական ազդեցությունը չի թողնում մնացորդային շահույթի աճի տեմպի վրա և վարկավորման բարձր տոկոսադրույքների պայմաններում միկրոգործարարներին ուղորդում է բիզնեսի ընդլայնման՝ սեփական միջոցների և անձնական խնայողությունների, անգամ պետակա բյուջեից ստացվող սուբսիդավորման հաշվին:

Ատենախոսության երրորդ՝ ***“ՓՄԿ զարգացման ֆինանսավորման արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում”*** գլխում մեկնաբանվել են ՓՄՁ կազմակերպությունների զարգացման ֆինանսավորման արդյունավետության գնահատման հիմնախնդիրների լուծումները:

Այս համատեքստում անդրադարձ է կատարվել հարկման քաղաքականության բարելավման ուղիներին:

Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին կազմակերպությունների կողմից վճարվող հարկերը պետբյուջեի հարկային մուտքերում նշանակալից են, որը հատկապես դրսևորվում է գերփոքր գործարարության շրջանում (տես աղյուսակ1-ում): Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին ՓՄՁ ոլորտի կողմից վճարվող հարկային պարտավորությունները մնում են կայուն (22-26%-ի սահմաններում) և հատկանշականն այն է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացվող հաշվետվությունների առավելագույն չափաբաժինը առնչվում է հենց փոքր և միջին կազմակերպությունների գործունեության ոլորտին, որը և վկայում է ՀՀ-ում գործող հարկային կազմակերպված և կայացած հարկային վարչարարության մասին:

Աղյուսակ 3

ՓՄՁ-ի քանակը և վճարված հարկերը 2013-2015թթ-ին

	2013	2014	2015
ՓՄՁ_-ի քանակ	75846	74365	75956
վճարված հարկեր	232,201մլն դրամ	237.710 մլն դրամ	275.532 մլն դրամ

ՓՄՁ ոլորտում կիրառվող ճկուն հարկային քաղաքականությունը որոշիչ դերակատարում ունի փոքր բիզնեսի զարգացման համար: Այդ իսկ պատճառով

հավասարակշռված հարկային քաղաքականության վարումը էական նշանակություն ունի փոքր և միջին կազմակերպությունների զարգացման գործընթացում, որի մշակման ժամանակ, մեր կողմից առաջարկվում է հաշվի առնել մի շարք նկատառումներ:

- Պրոգրեսիվ հարկման մոտեցումը չնայած որ հնարավորություն է տալիս կառավարությանը հավաքագրել ավելի շատ հարկեր առավել մեծ եկամուտներ ունեցող ՓՄՁ սուբյեկտներից, միաժամանակ խոչընդոտում է ոլորտի զարգացմանը: Մյուս կողմից, «Շրջանառության հարկի մասին» օրենքը դեռևս չի նպաստում ՓՄՁ ոլորտի զարգացմանը, քանի որ այն առավելապես միտված է խոշոր բիզնեսի կողմից վարվող ստվերային տնտեսության բացահայտմանը, քան փոքր գործարարության զարգացման հարկային խթանմանը,
- Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին կազմակերպությունների կողմից վճարվող հարկերը պետբյուջեի հարկային մուտքերում նշանակալից են և հետևաբար գերփոքր կազմակերպություններում աշխատող գործարարները գերադասում են միավորվել մեկ տնտեսվարող սուբյեկտում գործող անհատ ձեռներեցի շուրջ, քան գործել առանձին գրանցված կարգավիճակով, որը հատկապես դրսևորվում է ընտանեկան բիզնեսի պարագայում,
- ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության արտադրական ոլորտին նշանակալից օրենսդրական արտոնություններ չեն տրամադրում, որը նույնպես մոտիվացիոն ազդակներ չի հաղորդում նորամուծությունների հենքով ՓՄՁ ոլորտի զարգացման համար:
- ՓՄՁ ոլորտին պետական աջակցության և ոլորտի հարկային բեռի սահմանման միջև անհրաժեշտ է հակակշիռներ սահմանել այնպես, որ ձևավորվի փոքր և միջին կազմակերպությունների կապիտալի ընդլայնման և գործարարության հարկման օպտիմալ չափաբաժնի հավասարակշիռ իրավիճակ:



Գծապատկեր 4. ՀՀ-ում փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսավորման ինստիտուցիոնալ ուղիների բարելավման առաջարկվող մեխանիզմը[8]

[8] Կազմված է ատենախոսի կողմից:

Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսավորման ինստիտուցիոնալ ուղիների բարելավման գծով առաջարկվում է երեք կարևորագույն ուղի (տես գծապատկեր 4.):

Առաջին, ՓՄՁ ոլորտում կիրառվող մոտիվացիոն հարկային քաղաքականության իրագործում այնպես, որ հավասարակշիռ իրավիճակ ձևավորվի պետության կողմից փոքր և միջին կազամակերպությունների զարգացման ֆինանսական աջակցության և հարկման դրույքաչափերի սահմանման միջև: Վարվող հարկային քաղաքականության արդյունքում մի կողմից ՓՄՁ սուբյեկտները չպետք է մրցակցային դաշտում հայտնվեն արտոնյալ իրավիճակում, սակայն մյուս կողմից, պետք է ոլորտում սահմանվի այնպիսի հարկային բեռ, որ ձևավորվի փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսավորման ընդլայնման և գործարարության հարկման օպտիմալ չափաբաժնի հավասարակշիռ իրավիճակ:

Երկրորդ, ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված ֆինանսական ներդրումների հատույցի չափում և գնահատում այնպես, որ հնարավորություն ստեղծվի մակրո և միկրո մակարդակներում իրականացնելու փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսավորման հանրային ու մասնավոր ռեսուրսների արդյունավետության գործոնային վերլուծություն՝ ըստ ձևավորվող սոցիալ-տնտեսական արդյունքների և ֆինանսական աղբյուրների միջև պատճառահետևանքային փոխկապակցությունների սահմանվող շրջանակի:

Երրորդ, բանկային գործունեության ֆինանսատնտեսական սահմանումն այնպես , որ մի կողմից , ՀՀ-ում ընդլայնվեն փոխառու միջոցների տրամադրման հնարավորությունները փոքր և միջին գործարարության շրջանակում, և մյուս կողմից, այդ գործընթացի նկատմամբ ՀՀ կետրոնական բանկի կողմից հակակշիռներ սահմանվեն՝ ՓՄՁ ոլորտին տրամադրվող միկրովարկերի վերահսկողության, արդյունավետության գնահատման, վարկավորման ֆինանսական ռիսկերի մեղման ու կանխարգելման ուղղությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսական տեսամեթոդական և գործնական հիմնախնդիրների ուսում-նասիրությունների հիման վրա, մեր կողմից արվել են մի շարք եզրակացություններ և կատարվել են առաջարկություններ՝ ՀՀ ՓՄՁ ոլորտում իրականացվող ֆինանսավորման բարելավման ուղղությամբ:

1. Փոքր և միջին կազմակերպությունների ձևավորման և գործունեության համեմատական մեկնաբանումները ցույց է տալիս գործարարության ոլորտի կազմա-կերպչական ու կառավարչական մի շարք առանձնահատկություններ, որոնք վճռորոշ դերակատարում են տնտեսության ՓՄՁ հատվածի ֆինանսական զարգացման համար:

Առաջին, ՓՄՁ ոլորտը լուծում է ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական և նույնիսկ քաղաքական խնդիրներ, այդ իսկ պատճառով, իր կարևորությամբ առանձնացվում է որոշակի չափանիշներով և գործունեության արդյունքներով: Այս առումով, տնտեսավարման ոլորտում այն պետք է առանձնակի մեկնաբանվի և որպես ՓՄՁ գործունեության առնձնացման առանցքային ցուցանիշ, նպատակահարմար է կիրառել կազմակերպությունների գործունեությունից ստացվող տարեկան հասույթի ծավալը, իսկ աշխատողների թվաքանակը կամ կազմակերպությունների տնօրինած ակտիվների քանակը կարելի է ընդամենը դիտարկել որպես ոլորտի տարանջատման ածանցյալ ցուցանիշներ:

Երկրորդ, զարգանալով խոշոր գործարարությանը զուգընթաց, ՓՄՁ ոլորտը չմրցակցելով վերջինիս հետ, այնուամենայնիվ տնտեսավարման ոլորտում կատարում է մի շարք լրացուցիչ գործառույթներ, որոնք իրենց լիարժեք լուծումները չեն ստանում խոշոր բիզնեսում: Մասնավորապես, ՓՄՁ ոլորտը կլանում է գործազրկության պոտենցիալ աճը, աջակցում է գործարարության այնպիսի ոլորտներ, որոնք տվյալ ժամանակահատվածում խոշոր բիզնեսի համար տնտեսապես շահավետ չեն, մոբիլիզացնում է նյութատեխնիկական լոկալացված միկրոռեսուրսները, աշխուժացնում է միրոֆինանսավորման ոլորտը:

Երրորդ, արժևորելով ՓՄՁ ոլորտի դերը տնտեսական համակարգում, այնուամենայնիվ այն դիտարկվում է ոչ թե կտրուկ առաջընթացի խթանման, այլ կայուն տնտեսավարման աջակցման միջոց, քանի որ փոքր և միջին կազմակերպությունների զարգացումը կրում է կանխարգելիչ և ռիսկային գործոններ, որոնք այնուհանդերձ, հաշվի են առնվում տնտեսական աճի ռազմավարական կառավարման շրջանակում:

2. Փոքր և միջին գործարարության զարգացման միտումների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի գործունեության մի շարք առանձնահատկություններ:

Առաջին. գերփոքր, փոքր և միջին կազմակերպությունների բաշխվածությունը ըստ գործունեության ոլորտների անհամաչափ է դրսևորվում ինչպես տարածաշրջանային, այնպես էլ տնտեսավարման ճյուղային կտրվածքով: Նման իրավիճակը բնավ չի նպաստում ՓՄՁ ոլորտի զարգացման միջոցով երկրի ներսում մարզային տնտեսական զարգացման համահարթեցմանը:

Երկրորդ. ՓՄՁ ոլորտը ՀՀ-ում առանձնապես չի դրսևորվում գործարարության դիվերսիֆիկացմամբ, քանի որ այստեղ գերակշիռ մաս են կազմում ծառայություններ մատուցող տնտեսավարող միկրոսուբյեկտները, որոնք իրենց հերթին նպաստավոր պայմաններ չեն ստեղծում նորամուծական ծրագրերի իրագործման, գործարարության միջազգայնացման ոլորտում ստեղծված արդյունքների արտահանման համար:

Երրորդ. փոքր և միջին գործարարությունը ՀՀ-ում առավելապես միտված է սոցիալական հիմնխանդիրների լուծմանը, և ոչ թե նորագույն տեխնոլոգիաներով և նորամուծական ծրագրերով տնտեսական առաջընթացի ապահովմանը, որը խոչընդոտում է ոլորտի մրցունակության ամրապնդմանը ինչպես ներքին, այնպես էլ միջազգային շուկայում:

3. ՀՀ-ում գործող գերփոքր, փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսական համակարգի վերլուծությունը բացահայտում է մի շարք թերություններ, որոնք բարելավման կարիք ունեն:

Առաջին, դեռևս ցածր մակարդակի վրա է գտնվում ֆինանսական ռեսուրսների ներդրման հատույցի հաշվետվողականությունը՝ ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր աղբյուրներով ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման ոլորտում: Այս առումով, նպատակահարմար ենք գտնում ոչ միայն կառավարության մակարդակով թիրախավորելու ՓՄՁ ոլորտի առանձին հատվածների զարգացման ֆինանսավորումը, այլև գնահատելու ֆինանսական ներդրումներից կամ օգտագործված փոխառություններից ստացված փաստացի արդյունքները և դրանք ներակայցնելու հաշվետվություններով:

Երկրորդ, հանրային ֆինանսների դերակատարումը ՀՀ ՓՄՁ ոլորտի զարգացման ֆինանսավորման համակարգում զգալի է, և փոքր ու միջին կազմակերպությունները ձգտում են պետական սուբսիդավորման, դրամաշնորհների և հիմնադրամների հաշվին հնարավորինս ընդլայնելու իրենց զարգացման հիմնախնդիրների լուծման ուղիների շրջանակը: Սակայն, հանրային ֆինանսավորման աղբյուրները սահմանափակ են, և գործնականում ՓՄՁ ոլորտի սուբյեկտները իրենց զարգացման գործընթացում կիրառում են թանկարժեք վարկեր, լիզինգ և անգամ գրավատնային փոխառություններ: ՓՄՁ ոլորտին,

բարձր տոկոսադրույքներով փոխառությունների տրամադրումը, մեր կարծիքով, իր հասանելիությամբ հանդերձ, դեռևս արդյունավետ չի համարվում և որոշ առումներով անգամ ռիսկային է փոքր և միջին գործարարության զարգացման գործընթացում:

4. Փոքր և միջին կազմակերպությունների համար փոխառու միջոցների հասանելիության արգելքները անհրաժեշտ է վերլուծել ներկազմակերպչական, ինստիտուցիոնալ և բանկային գործունեության կտրվածքով, որոնցից յուրաքանչյուր խմբի գծով պետք է տալ հստակ գնահատականներ՝ գերփոքր, փոքր և միջին կազմակերպություններում ֆինանսավորման հասանելության հեշտության կամ դժվարությունների առումով:

Բացի այդ, ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման հասանելիությունը փոխկապակցվում է ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական գործոնների հետ, որտեղ առանցքային է համարվում գործարարների միջև փոխվստահությունն ու ոլորտում սոցիալական կապիտալի առկայությունը: Սոցիալական կապիտալի բավարար մակարդակը թույլ է տալիս խմբային փոխառությունների ձևավորման և խնայողական միությունների աջակցությամբ ներխմբային վարկային ռեուրսների հասանելիության ամրապնդմանը հատկապես գերփոքր և փոքր գործարարության ոլորտում:

Եվ վերջապես, գերփոքր, փոքր և միջին գործարարության կողմից արտաքին փոխառությունների հասանելիության շրջանակի ընդլայնման լուրջ խոչընդոտ է հանդիսանում նաև տնտեսավարող ներկայիս սուբյեկտներում ֆինանսական գործիքների կիրառման առաջարկների հիմնավոր իրազեկման բացակայությունը: ՓՄՁ ոլորտի սուբյեկտները առայժմ որպես ֆինանսավորման արտաքին աղբյուրներ՝ հիմնականում համարում են միկրովարկերը և գրավատնային վարկերը: Սակայն, ֆինանսական վարձակալության, վարկային միությունների, ֆակտորինգի գործիքակազմի տեղեկացվածությունը զգալիորեն կարող է նպաստել փոքր և միջին կազմակերպությունների կողմից փոխառու միջոցների հասանելիության աստիճանի բարձրացմանը:

5. ՓՄՁ ոլորտի զարգացման պետական աջակցությունը անհրաժեշտ է իրականացնել հավասարակշռված մոտեցմամբ, այնպես, որ մի կողմից պետական աջակցությունը ներակայանալի լինի և նպաստի ոլորտի զարգացմանը, սակայն մյուս կողմից էլ, այն իրականացվի հիմնավորված չափերով, չխաթարելով գործարարության բնականոն զարգացումը:

Այս առումով, ՓՄՁ ոլորտին առնչվող հարկային քաղաքականության շրջանակում հիմնախնդիր է առաջանում գործարարության հարկման օպտիմալ չափաբաժնի որոշման ուղղությամբ: Մի կողմից, հարկային արտոնությունների սահմանումը և հարկային բեռի թեթևացումը կարող է խթան հանդիսանալ ՓՄՁ ոլորտի զարգացման համար և լուծել նոր աշխատատեղերի ստեղծման, ընտանեկան բիզնեսի զարգացման շնորհիվ ազգաբնակչության սոցիալական պահանջմունքների բավարարաման խնդիրներ: Սակայն մյուս կողմից, ՓՄՁ ոլորտում հարկային արտոնությունների ընդլայնումը կարող է հանգեցնել գործարարության մրցակցային դաշտի խաթարմանը, պետ բյուջե հարկային մուտքերի նվազեցմանը, որը կարող է կանխարգելիչ դերակատարում ունենալ ոլորտի հետագա զարգացման համար:

Այս առումով, ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության արտադրական ոլորտին նշանակալից օրենսդրական արտոնություններ չեն տրամադրում, որը մոտիվացիոն ազդակներ չի հաղորդում նորամուծությունների հենքով ՓՄՁ ոլորտի զարգացման համար: Դրան զուգահեռ, ՓՄՁ ոլորտին պետական աջակցության և ոլորտի հարկային բեռի սահմանման միջև անհրաժեշտ է հակակշիռներ սահմանել այնպես, որ ձևավորվի փոքր և միջին կազմակերպությունների կապիտալի ընդլայնման և գործարարության հարկման օպտիմալ չափաբաժնի հավասարակշիռ իրավիճակ:

6. Փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսավորման հաջողությունը պայմանավորված է ոչ միայն վարկավորման արդյունավետ կազմակերպմամբ, այլև ֆինանսաբանկային գործարքները կարգավորող նորմատիվային դաշտի որոշակի մակարդակով ազատականության առկայությամբ: Եթե, մինչև ֆինանսատնտեսական համաշխարհային ճգնաժամը գործարարության ոլորտում գործում էին հիմնականում կանխարգելիչ և սահմանափակող նորմատիվներ, ապա հետճգնաժամային ժամանակահատվածում բանկային գործունեության տնտեսական նորմատիվների համակարգում աստիճանաբար սկսեցին զարգացում ապրել մոտիվացիոն նորմերը, որոնք միտված են զուտ շահույթի բաշխման համամասնությունների, շահաբաժինների հայտարարագրման, պարգևատրումների չափերի ձևավորմանը, դրանով իսկ բանկային մենեջմենթին խթանելով սահմանափակող և կանխարգելիչ նորմատիվային պահանջները իրագործելիս:

Նման իրավիճակում, մեղմելով վարկերի տեղաբաշխման ռիսկայնությունը, միաժամանակ սահմանափակվում է փոքր և միջին կազմակերպությունների վարկավորման գործընթացը, հիմնախնդիր է հանդիսանում ՓՄՁ ոլորտի զարգացման ֆինանսավորման շրջանակում: Այս առումով, մեր կողմից առաջարկվում է վերանայել վարկային կազմակերպությունների կապիտալի համարժեքության հաշվարկման մոտեցումները, առավելապես շեշտադրում կատարելով ոչ թե այդ ուղղությամբ նորմատիվի մեծության գնահատմանը, այլ բանկային կապիտալի որակական կազմի պահանջներին: Մասնավորապես, առաջարկվում է նվազեցնել վարկային կազմակերպությունների կողմից տնօրինած ակտիվների գծով սահմանված ռիսկայնության կշիռները և կապիտալի համարժեքության նորմատիվը, որով հնարավորություն կընձեռնվի մեղմելու վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխման սահմանափակումների աստիճանը և այդ ազատականացման հաշվին՝ պայմաններ կստեղծեն ՀՀ-ում փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսական հնարավորությունների ընդլայնման համար:

7. Սեփական միջոցներով փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսավորման գծով որոշումներ կայացնելիս, պետք է հաշվի առնվեն մի շարք հանգամանքներ, ելնելով ոչ միայն գործարարության միջավայրից, այլև ձեռնարկատիրական իրավական ձևից:

Առաջին, ֆինանսավորման սեփական աղբյուրներով ՓՄՁ ոլորտի զարգացումը արդարացվում է հիմնականում այն իրավիճակներում, երբ վարկային բարձր տոկոսադրույքների պարագայում փոքր և միջին կազմակերպությունները բիզնեսի կտրուկ աճ են ապահովում, հակառակ դեպքում՝ գործարարության սահուն աճի պարագայում առավել նպատակահարմար է դառնում վարկային ռեսուրսների հաշվին տնտեսական գործունեության ընդլայնումը:

Երկրորդ, գերփոքր կազմակերպությունները, հիմնականում հանդես գալով որպես անհատ ձեռներեցներ, դուրս են մնում հարկման հիմնական ռեժիմից և գործունեություն են ծավալում առավել բարվոք հարկային դաշտում, վճարելով շրջանառության հարկ 1,5 % դրույքաչափով, կամ գործելով ընտանեկան բիզնեսի հենքով (ձեռք բերումների փաստաթղթային հիմքերի առկայության պարագայում), ազատվելով շահութահարկից և ավելացված արժեքի հարկից՝ վճարելով միայն եկամտային հարկ: Հետևաբար, ձևավորվող հարկային համեմատաբար ցածր բեռը իր էական ազդեցությունը չի թողնում մնացորդային շահույթի աճի տեմպի վրա և վարկավորման բարձր տոկոսադրույքների պայմաններում միկրոգործարարներին ուղորդում է բիզնեսի ընդլայնման՝ սեփական միջոցների և անձնական խնայողությունների, անգամ պետական բյուջեից ստացվող սուբսիդավորման հաշվին:

8. Առաջարկվում է փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսավորման արդյունավետության գնահատմանը ցուցաբերել համալիր մոտեցում, դրանով իսկ ներկայացնելով ոլորտի սոցիալ-տնտեսական հատույցի տարբեր ուղղություններ: Միաժամանակ, կարևորվում է ՓՄՁ ոլորտի զարգացման ուղղված ֆինանսավորման հատույցը գնահատումը ինդեքսների հաշվարկման մոտեցմամբ, ֆինանսավորման սոցիալ տնտեսական հատույցը բնութագրող ցուցանիշները ներկայացնելով նույն ժամանակահատվածի համար հաշվարկված ինդեքսներով: Այս պարագայում, հնարավորություն է ընձեռնվում համադրելի դարձնել ֆինանսավորման արդյունքում ստացվող տարբեր սոցիալ-տնտեսական ցուցանիշները և դրանք ընդգրկել մեկ ագրեգատային ինդեքսում, և միաժամանակ իրականացնել ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման չափերի ու դրանից ստացված արդյունեքների պատճառահետևանքային կապերի վերլուծություն, որոնք կարող են լինել ինչպես ֆունկցիոնալ, այնպես էլ կորելյացիոն բնույթից:

Այսպիսով, ՀՀ-ում փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսավորման ինստիտուցիոնալ ուղիների բարելավման գծով մեր կողմից առաջարկվում են կարևորագույն ուղիներ, որոնք են ՓՄՁ ոլորտում կիրառվող մոտիվացիոն հարկային քաղաքականության իրգործումը, հավասարակշիռ իրավիճակ ձևավորելով պետության կողմից փոքր և միջին կազմակերպությունների զարգացման ֆինանսական աջակցության և հարկման դրույքաչափերի սահմանման միջև:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակված են ատենախոսի կողմից հրապարակված հետևյալ հոդվածներում.

1. Շ. Բաղդասարյան <<Փոքր և միջին ձեռնարկությունների արդի դերը տնտեսական համակարգում>> // Հայաստան <<Ֆինանսներ և էկոնոմիկա>> հանդես # 3-4 (175-176) էջ (65-67) 2015թ
2. Շ. Բաղդասարյան <<Փոքր և միջին գործարարության զարգացման համեմատական վերլուծությունը>> // Հայաստան <<Ֆինանսներ և էկոնոմիկա>> հանդես # 5-6(177-178) էջ (48-50) 2015թ
3. Շ. Բաղդասարյան <<Փոքր և միջին կազմակերպությունների հարկման բարելավման ուղիները>> // Հայաստան <<Ֆինանսներ և էկոնոմիկա>> հանդես # 3-4(187-188) էջ (85-87) 2016թ
4. Շ. Բաղդասարյան <<Փոխառությունների հասանելիությունը ՀՀ ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման համակարգում>> // Հայաստան <<Ֆինանսներ և էկոնոմիկա>> հանդես # 7-8 (191-192) էջ (71-74) 2016թ
5. Շ. Բաղդասարյան <<ՀՀ փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսավորման հիմնախնդիրները սեփական միջոցներով>> // Հայաստան <<Ֆինանսներ և էկոնոմիկա>> հանդես # 11-12 (195-196) էջ (83-84) 2016թ
6. Շ. Բաղդասարյան <<Փոքր և միջին ձեռնարկատիրության ֆինանսավորման միջազգային փորձը>> // Հայաստան <<Ֆինանսներ և էկոնոմիկա>> հանդես # 5-6 (201-202) էջ (123-126) 2017թ

ШАГАНЕ ШУРИКОВНА БАГДАСАРЯН

АКТУАЛЬНЫЕ ФИНАНСОВЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ МАЛЫХ И СРЕДНИХ ПРЕДПРИЯТИЙ В РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 “Финансы, бугалтерский учет”

Защита диссертации состоится 19-го октября 2017г. в 15^{30} часов, на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике действующего Армянском государственном экономическом университете по адресу: г.Ереван, 0025, ул. Налбандяна 128

Резюме

Тенденции развития малых и средних предприятий, их особенности всегда находились в центре экономических исследований. Малые и средние предприятия играют существенную роль в экономической системе любой стране, так как в процессе своего развития оставляют значительхый социально-экономический след. В рамках обеспечения устойчивой социально-экономической политики, малые и средние предприятия (МСП) имеют цель обеспечить развитие страны.

Исходя из этих обстоятельств, сфера МСП своими особенностями и возможностями всегда находилась в центре внимания государства, имея цель обеспечить экономическую безопасность страны, эффективное воспроизводство человеческого капитала, социальную стабильность, равномерное развитие территорий.

Целью диссертации является разработка системы мер, направленных на усовершенствование финансовой системы, содействующий развитие малых и средних предприятий . Для реализации данных мер выработаны следущие задачи:

- исходя из социально-экономических стимулов развития малых и средних предприятий, выявить проблемы развития сферы малых и средних предприятий в Р А,
- представить сравнительный анализ развития малого и среднего бизнеса как в региональном разрезе, так и в разрезе экономически развитых и развивающихся стран,
- показать финансовую систему, содействующую развитию малых и средних предприятий, и выявляя целесообразность внедрения финансовых источников в сферу малых и средних мереприятий,
- предложить пути усовершенствования налоговой политики малых и средних преприятий в РА,
- в рамках памках процесса либерализации предоставлять кредиты малым и средним предприятиям сектора, разработать пути усовершенствования экономических стандартов кредитных организаций в РА
- предложить новые подходы и финансированию развития малых и средних предприятий в целях повышения эффективности и контрля оценки.

Обьектом исследования является хозяйственная деятельность малых и средних предприятий, действующих в РА, со всеми ее подструктурами, процессами финансово-экономического регулирования.

Предметом исследования является сфера регулирования финансовых проблем развития малых и средних предприятий в РА.

В исследовании применялся метод абстрагирования и теоретико-методологические приемы, а также методы анализа хозяйственной деятельности организаций, анализа и оценки отчетов, сопоставления финансово-экономических данных, методы статистического, факторного и экспертного анализа.

Научной новизной исследования является предложение методов усовершенствования финансового развития действующих в РА малых и средних предприятий. В частности, в ходе исследования и решения выдвинутых задач был получен ряд результатов, из которых научную новизну представляют следующие результаты:

- на основе анализа финансовой системы малых и средних предприятий выявлены некоторые недостатки финансирования сферы МСБ в РА посредством обшественых и частных источников, предлагая пути повышения степени доступности заемных средств, возмещения субсидий, оптимального распределения финансовых ресурсов в данной сфере,
- были обоснованы подходы к осуществлению сбалансированной налоговой политики в отношении малых и средних предприятий, налоговые льготы и государственная финансовая поддержка сферы малых и средних предприятий, нацеленные на расширение деятельности и установление оптимальных размеров налогообложения,
- предложены новые методы подсчета адекватности капитала кредитных организаций, финансирующих сферу малых и средних предприятий, нацеленные на смягчение ограничений в распределении финансовых ресурсов кредитными организациями и создание условий для расширения финансовых возможностей малых и средних предприятий в РА;
- разработана информационная система управления эффективностью финансирования малых и средних предприятий,приведены показатели социально- экономической эффективности предпринимательской деятельности в сфере малого и среднего бизнеса и предложены взаимосвязанные методы микро и макроэкономического факторного анализа их причинно-следственных связей.

Shahane Shurik Bagdasaryan
Modern Financial Problems of Small and Medium Enterprises in RA

The abstract of the thesis for receiving the degree of Candidate of Economic Sciences in the specialty Y.00.03 "Finance, Accounting".

The defense of the thesis will take place on 19-th of October 2017 at 15^{30} p.m. at 014 Council of Economics SCC RA at Armenian State University of Economics: 128 Nalbandyan str., 0025, Yereven, Armenia

ABSTRACT

The features and tendencies ofthe development of small and medium organizations have always been in the agenda of economic investigations. Small and medium entrepreneurship has an essential role in the economic system of each country, as itleaves a significant socio-economic trajectory on the way of its development. Within the framework of sustainable socio-economic policy, small and medium enterprises (SMEs) aim to ensure the country's development. Based on this fact, the SME sector, along with its features and development opportunities, have always been in the center of the state's concern, aiming to ensure the county's economic security, effective reproduction of human capital, social security as well asbalanced territorial development.

The dissertation aims to work out a system of measures which will contribute to thedevelopment of the financial system, which in its turn will contribute to the development of small and medium enterprises. Its realization depends on the following issues;

- To identify the problems of the SME sector development in the Republic of Armenia, based on the socio-economic reasons of the development of SMEs .
- To introduce a comparative analysis the development of small and medium businesses bothfrom the regional point of view andin terms ofeconomically developed and developing countries.
- To interpret the financial system, which supports the development of small and medium enterprises, thus identifying the appropriateness of the involvement of different financial sources in the SME sector.
- To introduce the available framework for the small and medium enterprises in RAaimed at their development with domestic and borrowed means.
- To offer new ways directed to the improvement of the taxation policy for the activities of small and medium enterprisesin Armenia.
- To develop ways of improvement of the financial and economic standards of performance for the credit companies in RA in the framework of the liberalization process of granting loansto SMEs.
- To offer new approaches directed to the improvementof the evaluation and control of the development of SMEs.

The object of theresearchis the study of the existing economic activities of small and medium enterprises in RA along with its substructures and regulation procedures of the financial-economic management.

The subject of the research is the sphere of the solution of the main issues of the development of small and medium enterprises. Both abstraction and theoretical-methodical methods had been applied in the research as well as methods of analysis of the economic

performance of the enterprise and those ofinterpretation and evaluation reports, financial information comparison, statistics, factor and expert analysis.

The scientific and innovative nature of the research is thesuggestion of improved ways of the development of small and medium enterprises.Particularly, throughout the study and solution of the given problems a number of outcomes have been received, which are considered a scientific innovation;

- Based on the analysis of the development of the financial system of small and medium enterprises, some shortcomings in the financing system of SME in RA have been revealed, by both public and private sources, proposing to level upthe availability of loan funds and ensure an optimal distribution of financial resources in the sphere ofrefund justification of subsidizing, financial resource optimal distribution ways in the sphere.
- Some approaches of implementation of a balanced tax policyapplicable for small and medium enterprises have been confirmed, opposing tax benefits and the state financial support for SME sphere and aiming to provide optimal tax rates in order to expand the performance ofsmall and medium enterprises.
- New approaches for the calculation of the capital adequacy of the credit companiesfinancing the SME sphere, have been offered aiming to smoothe the limits of the distribution of financial resources provided by credit companies, and to widen the opportunities for the development of small and medium enterprises in RA.
- An information system of financial efficiency for the development ofsmall and medium enterprises has been worked out, by bringing togetherthe indexes of social-economic return rates in the sphere of SME and offering interchangeable ways of the micro-macro factor analysis of their cause-effect relationships.